Այդ ուղղութեամբ, Հոկտեմբերի 15-ը տարեդարձին պլաններն իրացնելու ուղղութեամբ, աշխատանքը մեզ մոտ ի՞նչպէս է գնում. վատ, չափազանց վատ, այդ գործում մենք խախտառակ կերպով հետ ենք մնում. սակայն վե՛ր և այնպիսի դրութիւն, վոր կոմյերիտական մի շարք բրիգադներ և մի շարք կոմսոմոլիտներ, վորոնք անցյալ տարի առաջավոր շարքերումն էլին, այսօր հետին շարքերումն են: Այլևս այդպէս շարունակել չի կարելի. յետե մենք ուզում ենք, վոր մեր խոսքը գործ դառնա, այն ժամանակ պետք է ընդունենք, վոր 100%—դա ընդհանուր, ամենուրեք գործն է, վոր պետք է կատարել 100%-ից բարձր. իսկ 100-ը թողնել հետ և այն կոմյերիտական բջիջը, վորը հհամարի 120%-ի, 150%-ի թե՛ քանակով և թե՛ վորակով, նրա մասին նոր կասենք, վոր իրոք պայքարում է հնգամյակը 4 տարում կատարելու համար, բայց չի կարող գործ դարձնելու համար: Այսպէս և միայն այսպէս պետք է գնել ինքիրը: Իսկ խնդրի լուծման համար ի՞նչ է սոյսպէս պետք է գնել ինքիրը: Իսկ խնդրի լուծման համար ի՞նչ է հարկավոր սենել. հարկավոր են մի շարք միջոցառումներ, վորոնց մասին դուք բանաձևում կգրեք, և բացի այդ հարկավոր է նաև լավ աշխատանքի փորձի փոխանակութիւն կատարել: Մեզ մոտ այդ գործն ինչպէս հարկն է կատարվում է. վո՛չ. այնինչ մենք ունենք կոմյերիտական բջիջներ, վորոնք շատ լավ են աշխատում, նրանցից մի քանիսը նույնիսկ ամեն մի հանդիսավոր նիստին ուսուցողներով դուրս են գալիս, պատմում իրենց տարած աշխատանքի մասին, հաղթանակի պատճառների մասին: Բայց շատ քիչ բջիջներ են աշխատանքի փորձի փոխանակութիւն կատարում այդ ուսուցողներում բերած փաստերի հիման վրա: Ի՞նչ է մնում անել այդ ուսուցողներից հետո. այն, վոր իմանա՞նք նրանց հաջորդ ընթացքի մասին: Որինչակ, կաշարանի կոմսոմոլը տարել է ԼԵՅՆՄ քաղկոմի փոխանցիկ գրուշը, բայց արդո՞ք արժանի՞ յի մինչև հիմա պահել՝ չգիտենք: Մենք գիտենք, վոր տպաբանում ընկ. կոստրեվի անվան բրիգադը կատարել և գերակատարել է իր պլանը, բայց արդո՞ք վորակով գերակատարում է թե վո՛չ՝ մենք չգիտենք: Մենք լսել ենք, վոր ձեթ-ոճառ գործարանում կոմսոմոլի բրիգադը գերակատարել է իր պլանը, բայց արդո՞ք աչքակապութիւն է անում, թե ճիշտ է ասում՝ մենք չգիտենք: Ինչո՞ւմն է կայանում կոմսոմոլի անելիքը այս խնդրում. հաշիւի առնել և մյուս բջիջները փոխադրել լավ աշխատանքի փորձը մաստաներին, կոմյերիտական վոլջ կազմակերպութեանը տեղյակ պահել կատարված գործին և լավագոյն աշխատանքի փորձը լայն քննարկման առարկա դարձնել: Ինչո՞ւ չպետք է լինել այնպէս, վոր կոնֆերանսին ուսուցող տար միայն կոմյերիտական այն բջիջը, վորը հետ է թողնում տասնյակ կոմյերիտական բջիջներ. ինչո՞ւ չպետք է պայքարով ձեռք բերել ուսուցող տարու իրավունքը: Իսկ մեզ

մոտ յերբեմն պատահում է, վոր ժողով ենք հրավիրում, այդ ժողովում, ըստ տրագիկայի, պետք է անպայման ուսուցող լինի, բայց ուսուցողն ամբողջ չկա. մեկին դնում ասում ենք՝ ուսուցող տուր, ինչ վոր կարող ես ասիր, միայն թե ուսուցող լինի: Մինչդեռ հարկավոր է, վոր մենք կարողանանք ստուգել և ստուգումից հետո ասել, թե տպաբանի բջիջը սուտ չի ասում, ասել, վոր ձեթ-ոճառի բրիգադը ճիշտ է ասում:

Տ. ԱՎԵԼԻ ՔԻՉ ՓՔՈՒՆ ՅՐԱԶՆԵՐ, ԱՎԵԼԻ ՇԱՏ ՀԱՍԱՐԱԿ ՅԵ՛՛ԱՌՈՐՅԱ ԳՈՐԾ

Այս կապակցութեամբ յես կոնֆերանսի առջև խնդիր եմ դնում, վոր կոմսոմոլը մեզ, մեր ժողովրդական տնտեսութեանը տա այնպիսի աշխատողներ, վորոնք կարող կլինեն իր բարձրութեան վրա դնել առաջադրված գործը: Չպետք է մտածել այսպէս, թե մեր ինչ բանն է այդ գործը, մենք պլաններ ենք կատարում, թող ուրիշները հաշիւի առնեն: Այդ սխալ կլինի: Վատ չե՛ր լինի, յետե ձեր կոնֆերանսը վորոշե՛ր 3-4 ամսվա ընթացքում պատրաստել և տալ կուսակցութեանն ու ժողովրդական տնտեսութեանը 100 հաշիւառներ, վորոնք կարողանան սոցմրցման և հարվածախնդրության մեջ մտած բրիգադների աշխատանքը ամեն ոք գործարանում հաշիւի առնել (ծափահարութիւններ): Յետե մենք ի վիճակի լինենք այս գործը կազմակերպել, յետե այս գործի կազմակերպման և մինչև վերջը տանելուն, գլուխ բերելուն մոտենանք բայց չի կարող, գգանք, հիշենք, վոր բայց չի կարող խոսքը գործն է, այն ժամանակ 100 հաշիւառ պատրաստելն արժի մի 6 ամսվա ուսուցողների, արժի այն ուսուցողին, վոր դուք ուղարկել եք կուսակոմիտեյին: Լավ կլինի, առհասարակ, վոր սրանից հետո ամեն մի կոմյերիտական բջիջ (և վո՛չ միայն կոմյերիտական բջիջ) իմանա՞ր, վոր ուսուցողի փոխարեն լավ կլինի հանդես բերել ավելի շատ կենդանի գործ, ցույց տալ «կենդանի» մարդուն, վորին ճանաչե՛լին, իմանային, թե այս կոմսոմոլիտը կարող է այս գործը կատարել. չկարծեք, վոր այս պահանջը նոր է դրվում մեր առաջ: Վո՛չ: Ընկեր Լենինը վաղուց է ասել — «Ավելի քիչ փնտն փրագներ և ավելի շատ հասարակ և ԱՌՈՐՅԱ գործեր... Ավելի քիչ քաղաքական հոռութեամբութիւն. ավելի շատ ուշադրութիւն դեպի ամենահասարակ, բայց կենդանի... կոմունիստական շինարարութեան փաստերը»:

Այս առթիւ յես կուղեյի մի հարց տալ. մտածո՞ւմ ենք մենք խորը կերպով այն մասին, թե, ասենք, ինչից է կազմվում պայքարը կոմունիզմի համար, խորացե՛ւ ենք այն բանի մեջ, վոր «կոմունիզմը նրանում է կայանում, վոր կոմյերիտիստական մեջ մտած յերիտասարդութիւնը՝ պատանիները և աղջիկները ասեն՝

—«Տգիտութեամբ վերացնել ՄԵՐ ԳՈՐԾՆ Ե»:

Յեթե յես չասեմ, վոր այս նախադասութիւնը պատկանում է ընկ. Լենինին, չատերը կարող են ասել՝ մենք խոշորագույն գործեր ենք կատարում, 5-ամյակն ավարտում ենք չորս տարում, իսկ դուք ասում եք, վոր անդրադիտութիւն վերացնելը՝ դա կոմունիզմ է, վոր դա մեր գործն է, և վոչ թե Լուսժողկոմատի:

Դուք տեսնում եք, վոր ընկ. Լենինը այնպես է դնում խնդիրը. վոր ամեն մի կոմյերիտական հասկանալի, թե անդրադիտութիւնը, տգիտութիւնը վերացնելը նրա գործն է, վոր անդրադիտութիւն վերացնելը նշանակում է կոմունիզմ կառուցել:

Լենինի այս պատգամը կատարելու համար ձեզնից պահանջվում է ավելի չափ աշխատանք Համկոմկուսի Կենտկոմի (1931 թվականի սեպտեմբերի 5-ի դպրոցական շինարարութեան մասին յեղած հայտնի վորոշումը կատարելու ուղղութեամբ: Կոմսոմոլի կազմակերպչութիւնը պետք է սեպտեմբերի 5-ի վորոշման կիրառման գործը հասցնի բարձր աստիճանի, ոգնի Լուսժողկոմատին, լուսբաժնին, «ԿԱՆԸ» ընկերութեան, քաղխորհրդին, վորպեսզի սեպտեմբերի 5-ի վորոշումը ժամանակին իրագործվի կյանքում: Ինչո՞ւ Յերեանի կոմսոմոլի կազմակերպչութիւնը չկարողացավ այս տարի պատվով դուրս գալ կոմյերիտական ուսուցիչների մօրթիկից աշխատելու գործում. ինչո՞ւ չկարողացավ ամեն մի կոմյերիտականի հասկացնել, վոր կոմունիզմը կայանում է նաև նրանում, վոր մենք վերացնենք անդրադիտութիւնը, ինչո՞ւ մենք այն կոմյերիտականներին, վորոնք խուսափեցին մօրթիկից, դուրս չարինք կոմյերիտիկութիւնից: «Մա՞նր» խնդիր է: Կասեմ ավելի «մանր» խնդիրների մասին:

Վերցնենք մեր բնակարանային դրութիւնը. մեր գործարանների շէնքերի խնդիրը, վորտեղ մենք ապրում ենք: Ի՞նչ դրութեան մեջ են. չափազանց անմխիթալ, չափազանց կեղտոտ դրութեան մեջ են մեր ապրելու շէնքերը, մեր աշխատելու վայրը: Ինչո՞ւ չկազմակերպել ամեն մի հանրակացարանում հատուկ կոմյերիտական կազմակերպիչ, վորը հսկի այդ գործի վրա, վորը կուշտուրայի ամենատարրական որենքների պահպանման վրա հսկի: Կամ թե՛ վերցնենք Յերեանի փողոցները, վորոնք ամենախայտառակ դրութեան մեջ են: Ինչո՞ւ կոմյերիտական բժիշկները չպետք է վերցնեն իրենց վրա ամեն մի փողոցի չեֆութիւնը և իրար հետ սոցմրցման պայմանագիր կապեն փողոցը կարգին, մաքուր պահելը տեսակետից: Կլինեն կոմյերիտականներ, վորոնք կասեն՝ դա իմ գործը չէ. յես հո դվորնիկ չեմ, — կարծես թե «դվորնիկ» խոսքը անպատիվ խոսք է: Մենք, իհարկե, չենք պահանջում, վոր կոմյերիտականը դվորնիկի գործ կատարի. կարիք չկա, բայց քաղաքի մաքրութեան գործը մեր ամենակարեւոր խնդիրներից մեկը պետք է դառնա:

Վերցնենք, ընկերներ, մի ուրիշ խնդիր՝ հաց վաճառելու խնդիրը: Յերբ խնդիր ենք դնում, վոր կոմյերիտականը պետք է դնա հաց վաճառի, վոմանք ասում են՝ դա մեր գործը չէ: Վոչ, դա կոմսոմոլի գործն է, և մենք պահանջ ենք դնում կոմսոմոլի առաջ՝ ամսից ապա տալ 40 կոմյերիտականի հաց վաճառելու համար, լավ հիշելով ընկ. Լենինի խոսքերը, վոր պայքարը հացի համար՝ պայքար է սոցիալիզմի համար:

Տեսնում եք, ի՞նչպիսի՜ առաջին հայացքից կարծես թե փոքր՝ խնդիրները կոմունիզմի խնդիր են դառնում:

Ընկ. Զհանգուլյանը հաղորդեց, վոր կոմյերիտականներից վոմանք բաղնիք չենք դնում. յերեկ կարծում են, վոր բաղնիք դնալը բուրժուական նախադաշարմունք է. շուտով սկսվում է ամառը. ինչո՞ւ չկաղմական նախադաշարմունք է. կոմյերիտական բրիգադներ, վորոնք հենց Զանգուկերպի լուղորդների կոմյերիտական բրիգադներ, վորոնք հենց Զանգուկում ձեռք կրերեն և՛ լողանալու ընդունակութիւն և՛ միաժամանակ մաքրութեան բրիգադներ կլինեն. նրանք բոլորի կենթարկեն այն կոմյերիտականներին, վորոնք չեն ուրում մաքրութիւնը, վորոնք քիչ են բաղնիք դնում:

Ընկերներ. այս բոլոր «փոքրիկ» պահանջները հարկավոր են մեծ պայքարի համար: Այս «փոքր» խնդիրները, ինչպես և բանվորական ու աշխատավորական մասսաների հետ ունեցած և ունենալիք մշտական կապը, նրանց հարցումներին բավարար և հասկանալի պատասխան տալը, նրանց առօրյա կարիքներին լուծումը կուսակցութեան ղեկավարութեան ներքո—հրամայական պահանջներ են հիմա, վորոնք պահանջում են ամրակուռ կազմակերպվածութիւն: Իսկ ամրակուռ կազմակերպվածութիւնը պահանջում է խստագույն դիսցիպլինա, դիսցիպլինայի պահպանումն թե՛ մեծ գործում և թե՛ «փոքր» հարցերում:

Խոսքս վերաբերում է նաև արտադրական դիսցիպլինային. ընկ. Լենինը այդ մասին ասել է, «վոր պետք է սովորել միացնել աշխատավոր մասսաների բուռն, գարնամային հորդ ջրերի նման ամպիքը հեղեղող միտինգային դեմոկրատիզմը» ՅԵՐԿԱԹԵ դիսցիպլինայի հետ աշխատանքի ժամանակ, մի անգի, խորհրդային դեկավարի կամքին, աշխատանքի ժամանակ ԱՆՎԵՐԱՊԱՆՈՐԵՆ ՀՆԱԶԱՆԻՎԵԼՈՒ հետ»: Լրիվ կատարում ենք մենք ընկ. Լենինի այս պահանջը. վոչ: Կոմյերիտականներ կան, վորոնք կարծում են, վոր դիսցիպլինան իրենց չի վերաբերում, վոր կոմյերիտական տոմսի գոյութիւնը փրկում է դիսցիպլինան պահպանելուց: Մենք պահանջում ենք կոմսոմոլի կազմակերպչութիւնից՝ բարձր պահել արտադրական դիսցիպլինան, բարձր պահել իր կոմյերիտական դիսցիպլինան:

Այս բոլորը նշանակում է, վոր կոմյերիտական քարոզում ենք «մանր» խնդիրներ միայն. իհարկե վոչ: Այս «մանր» խնդիրների բուծումից է կախված մասսաների մօրթիկից աշխատելու մեր կուսակցութեան լուծումից է կախված:

դունդներին, կատարման չուրջը: Մասսաներին մորելիդացիայի յենթարկել՝ դեռ չի նշանակում միայն բանաձևեր հանել, մորելիդացիայի յենթարկել՝ չի նշանակում անպայման խոշոր հարցերի մասին խոսել: Խնդիրը հենց այն է, վոր կարողանանք մեր առօրյա աշխատանքն այնպիսի սկզբունքային բարձրութեան հասցնել, վոր կարողանանք ամեն մի աշխատանք, վորքան էլ նա փոքր լինի, կապել մեր հիմնական խնդիրներին հետ, բղխեցնել նրանցից: Խնդիրը կայանում է նրանում, վոր զերծ մնանք սնապարծութիւնից. սնապարծութիւնը ամեն մի գործում կարող է մեծ վնաս հասցնել: Սնապարծներին մասին էր, վոր ընկ. Լենինը ասում էր. «Կոմունիստական սնապարծութիւնը նշանակում է այն, վոր մեկը, լինելով կոմունիստական կուսակցութեան անդամ և այնտեղից դեռ չվճռված, յերևակայում է, վոր նա կարող է իր բոլոր խնդիրները լուծել կոմունիստական դեկրետացրութեամբ»:

Կարող ենք բերել այնպիսի փաստեր, վորոնցից յենթադրվում է, թե խնդիրները կլուծվեն ղեկընտարութեամբ: Ձեռ ուզում բջիջների մասին խոսել, ուզում եմ կոմսոմոլի քաղաքային կոմիտեի պրակտիկայից մի քանի փաստեր բերել:

9. ԴԵԿՐԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԵՑ ՀԵՌՈՒ ՄՆԱԿ. ԼԻՆԵԼ

ԼԵՆԻՆԵՑ-ԱՇԽԱՏՈՂ

1932 թ. հունվարի 12-ին, կուսակցական կադմակերպութեան 2-րդ կոնֆերանսի առթիվ կոմսոմոլի քաղկոմը վորոշում հանեց ստեղծել պարտուսի յերկաթյա ֆոնդ 10.000 ուրբու հումարի չափով: Ստեղծեց. վոչ: Ինչո՞ւ չստեղծվեց այդ ֆոնդը: Փոքրը չստեղծվեց, վորովհետև կոմսոմոլի քաղկոմը կարծում էր, վոր մասսաներին մորելիդացիան կարող է անել ղեկընտարութեամբ, վորոշում հանելով: Ուրիշ փաստ. 1932 թ. ապրիլի սկզբին կոմսոմոլի քաղկոմը վորոշում ընդունեց 2-րդ կվարտալը հարվածային հայտարարելու մասին, արգֆինպլանների ձեղքվածքները ծածկելու համար: Կվարտալը յեղա՞վ հարվածային. վոչ, դա միայն կոմունիստական ղեկընտարութիւնն էր. մասսաներին մորելիդացիա չկար: Յերրորդ որինակը. կոմսոմոլի քաղկոմը վորոշում ընդունեց Քանաքեռգետի հիդրոէլեկտրական շէնթիւնի մասին. մենք ասացինք՝ շատ ուրախ ենք, վոր դուք այդ շէնթիւնը վերցրել էք, խնդրում ենք ձեռնից՝ Քանաքեռգետ ուղարկել 50 կոմյեթիտականներ: Ընկ. Ջհանգուլյանը, Լալայանը և Ջրաղացպանյանը յեկան և մեզ ասացին. «50 մարդը ինչ բան է վոր... 70.000 հոգի կարող ենք տալ»: Սակայն տվեցին՝ զոնե 50 մարդը. վոչ, տվեցին միայն 23 մարդ: 23-ից 8-ը չգնացին, մնաց 15 մարդ և դուրս յեկավ, վոր կոմիտեն չկատարեց իրեն խոստումը: Իսկ դուք ղեկեք, վոր Քանաքեռգետը հանդիսանում է Հայաստանի Դնեպրոստրոյը: Հիդրոէլեկտրական

1932 թ. հունվարին գործի դեցլը Յերեանի վողջ կուսակցական և կոմյեթիտ կադմակերպութեան պատվի գործն է: Ձեր կոնֆերանսը պետք է պահանջի նորընտիր քաղկոմից՝ կատարել իր վրա վերցրած շէնթիւն պարտականութիւնները, չխնայել վոչ մի ջանք, վորպեսզի հիդրոէլեկտրական ժամանակին ավարտվի, վորպեսզի 1933 թվի սկզբին անպայման վառվեն Քանաքեռգետի լույսերը: Նույնը վերաբերում է և տրամվային: Կոմսոմոլը շէնթիւն է վերցրել, պահանջում է սեպտեմբերին ավարտել կառուցումը, ՄՅՈՒԴ-ի տարեգարձը կոմսոմոլը ուզում է տրամվայի վրա տոնել, հարկավոր է հետաքրքրվել, տեսնել, թե ինչու տրամվայի կառուցումը չի կարելի վերջացնել ՄՅՈՒԴ-ի տարեգարձին, ինչու 10000 բանվորական ձեռքի փոխարեն կոմսոմոլը տվել է միայն 300: Վերցնենք ուրիշ որինակ. միջոցների մորելիդացիան. 1931 թ. մենք կոմսոմոլին ասեցինք, վոր 75.000 ուրբու փոխառութեան տոմսեր տարածեն անկադմակերպ բնակչութեան մեջ: Կոմսոմոլը բերեց և տոմսերի մի մասը մեզ վրա ծախեց՝ յերեկ կարծելով, վոր ամենից անկադմակերպը քաղաքում Յերեանի կուսակցական կոմիտեն է:

Ի՞նչ է հարկավոր, վորպեսզի չլինի կոմունիստական սնապարծութիւնը. դրա համար հարկավոր է ավելի կապված լինել մասսաների հետ: Կապի այն աստիճանը, վոր մենք ունենք, դեռ քիչ է: Կոմսոմոլը պետք է ավելի կապվի մասսաների հետ, իմանա նրանց ապրումները, լծվի նրանց հետ մեր խնդիրներին լուծման, անձնական որինակով ցույց տա աշխատելու ձևը: Ահա ինչ է պահանջվում մեզանից: Արդե՞ք հնարավոր է այդ բոլորը կատարել. իհարկե, հնարավոր է: Բայց լեկիները ուրիշ կառուցվածքի մարդիկ են, նրանք այնպիսի մարդիկ են, վորոնք ջոկվում են ուրիշներից, նրանք ամենաառաջագեղ զոտակարգի՝ բանվոր զոտակարգի ավանդարդն են, և մենք պահանջում ենք, վորպեսզի կոմսոմոլը, վորը կուսակցութեան ոգնականն է, նա ևս բայց լեկիյան կառուցվածքի մարդ լինի: Հարկավոր է, վոր կոմսոմոլիտար ձեռք բերի բայց լեկիյան աշխատանքի վոճը: Ահա այն պահանջը, վոր մենք դնում ենք ձեր առջև:

Մենք պահանջում ենք աշխատել լենինյան վոճով, այսինքն միացնել իրար ուսական հեղափոխական թափը և ամբերիկյան գործնականութիւնը. այսինքն՝ դեմ դուրս դալ ուստինային, կոնսերվատիվին, հաղթահարել ամեն մի արգելք և սկսած գործը հասցնել իր հաղթական վախճանին: Լենինյան վոճի մասին ասա՛ թե ինչ է ասում ընկ. Ստալինը.

«Յես նկատի ունեմ աշխատանքի վոճը—այն առանձնահատուկը և ինքնատիպը լենինիդի պրակտիկայում, վորն ստեղծում է լենինից—աշխատողի յուրահատուկ տիպը: Լենինիդը թերեւտիկ և

պրակտիկ դպրոց ե, վոր մշակում ե կուսակցական և պետական աշխատավորները ուրույն տիպ և ստեղծում ե աշխատանքի ուրույն, լենինյան վոճ: Վորո՞նք են այդ վոճի բնորոշ գծերը, ինչպիսի՞ք են նրա առանձնահատկությունները:

«Այդ առանձնահատկությունները յերկուսն են՝

ա) Ռուսական հեղափոխական թափը և բ) ամերիկյան գործնականությունը: Լենինիզմի վոճն այդ յերկու առանձնահատկությունների միացումն ե պետական և կուսակցական աշխատանքում»:

«Ռուսական հեղափոխական թափը հակաթույնն ե անչարժության, ռուտինայի, կոնսերվատիզմի, մտքի քաղցածան, ստորկական վերաբերմունքի դեպի պապական տրադիցիաները: Ռուսական հեղափոխական թափը—դա այն կենսաբար ուժն ե, վորն արթնացնում ե միտքը, առաջ ե շարժում, քանդում ե անցյալը և հեռանկար ե տալիս...

«...Ամերիկական գործնականությունը—դա այն անհատնելի ուժն ե, վոր չգիտե, և չի կարող ճանաչել վորեւե սահման, վորն իր գործնական համառությամբ հաղթահարում ե ամեն մի արգելք, վոր չի կարող մի անգամ արդեն սկսած գործն իր վախճանին չհասցնել, յեթե դա նույնիսկ մեծ գործ չե և առանց վրդի անհարին ե լուրջ չինարարական աշխատանք...» (ՄԱՍԼԻՆ, «Լենինիզմի հարցերը», էջ 107—108):

Ի՞նչ ուղիներ կան լենինյան աշխատանքի վոճը յուրացնելու համար. առաջինը՝ դա մեր առօրյա պայքարն ե կուսակցության գլխավոր գծի համար. պետք ե ամեն մի կոմյերիտական խմանա, թե ինչու համար ե նա աշխատում: Իսկ յեթե հարցնես ամեն մի կոմյերիտականից, թեկուզ ակտիվից, թե ինչու համար ե աշխատում, դուցե ե նա չկարողանա ըրիվ պատասխանել: Ուրեմն՝ հարկավոր ե, վոր մեր պայքարն իմաստավորվի ամեն մեկի կողմից: Ի՞նչ ե ասում այդ առթիվ ընկ. Ստալինը: Ընկ. Ստալինն այդ մասին հետևյալն ե ասում.

«Պրակտիկան կուրանում ե, յեթե նա չի լուսավորում իր քանապարհը հեղափոխական քեռքիայով: Սակայն քեռքիան կարող ե քանդվել անհատական շարժման հսկայական ուժ դառնալ, յեթե նա զարգանում ե անհատական ինքն կապված հեղափոխական պրակտիկայի հետ, վորովհետև նա, և միայն նա կարող ե հավատ ներշնչել շարժմանը, տալ կողմորոշման ուժ և շրջապատող դեպքերի ներքին կապերի հասկացողություն, վորովհետև նա և միայն նա կարող ե ոգնել պրակտիկին հասկանալու վոչ միայն այն, թե ինչպես և ուր եմ շարժվում դասակարգերը ներկայումս, այլևս ուր գլխիմ ե շարժվեմ նրանք մոտ ապագայում»:

Իսկ ընկ. Լենինը վաղուց ասել ե, վոր՝

«Առանց հեղափոխական քեռքիայի չի կարող լինել նաև հեղափոխական շարժում»:

Մի ուրիշ առթիվ, մարքսիստ-ազդարագետների համադրումարում, ընկ. Ստալինն ասում ե՝

«Հայտնի յե, վոր թեորիան, յեթե դա իսկական թեորիա յե, կողմորոշման ուժ, հեռանկարի պարզություն, աշխատանքի վստահություն և մեր գործի հաղթանակի հավատք ե ներշնչում պրակտիկ աշխատողներին»:

10. ԶԻՆՎԵԼ ՄԱՐԿՍԻԶՄԻ-ԼԵՆԻՆԻԶՄԻ ԹԵՈՐԻԱՑՈՎ

Ահա, ընկերներ, ինչպիսի խոշոր նշանակություն ունի հեղափոխական թեորիային տիրապետելու հարցը: Մարքսիստ-լենինիստ դառնալու համար, հեռանկարները տեսնելու և հաղթանակելու համար խոշոր նշանակություն ունի թեորիան. ասա թե ինչու մարքս-լենինյան թեորիային տիրապետելուց խուսափելու ամեն մի փորձ, այդ գործին խանգարելու ամեն մի փորձ պետք ե դիտվի ինչպես աջ ուղիորդող գործնականում: Փորձենք ամեն մի ժողովում քվեարկություն կատարել, թե քանի կոմյերիտական, քանի հոգի յեն կարդացել վո՛չ միայն ընկ. Ստալինի «Լենինիզմի հարցերը», այլև յերեկվա «Սկանդալը»-ը: Շատերը չեն կարողանա մատերը բարձրացնել: Իսկ թեորիային չտիրապետող կոմյերիտականը չի կարող հեռանկարներ ունենալ, թերթ չկարդացող կոմյերիտականը չի կարող ղեկավարել: Հարկավոր ե այնպես անել, վոր չլինի վոչ մի կոմյերիտական, վոր թերթ չկարդա, չլինի վոչ մի կոմյերիտական, վոր առաջիկա ամիսների ընթացքում կարդացած չլինի ընկ. Ստալինի «Լենինիզմի հարցերը»: Թեորիային տիրապետելու պահանջը մենք այսօր դնում ենք մեր կոնֆերանսի առաջ նաև նրա համար, վոր կոմսոմոլին հարկավոր ե լուսավորել մարքսիզմի-լենինիզմի թեորիայի լուսով վոչ միայն ամեն մի կոմյերիտականի ճանապարհը, այլև վողջ յերիտասարդությունն ճանապարհը: Դա հիմնական միջոցներից մեկն ե, վորով կարող եք սովորել լենինիզմի վոճը: Կա և ուրիշ միջոց. դա մեր կուսակցության և կոմյերիտականության պատմությունն ե. մասնավորապես մեզ մոտ, Հայաստանում, հարկավոր ե, վոր պետք կոմյերիտական կազմակերպությունը ծանոթ լինի «Սպարտակի» պատմությանը: Կան կոմյերիտականներ, վորոնք կուսակցության և կոմյերիտականության պատմության ուսումնասիրության գործը համարում են ավելորդ գործ, արխիվային գործ: Սա ել, ընկերներ, սնապարծության նմուշներից մեկն ե: Դուք գիտեք, ընկերներ, վոր կուսակցության պատմության ուսումնասիրությունը խոշոր գործ ե. մա-

նախանգ «Պրոլետարական ռեվոլյուցիա» ժուրնալին ուղղված՝ ընկ. Ստալինի նամակից հետո :

Կուսակցության պատմության ուսումնասիրության առթիվ ընկ. Պոստիշևիվ հետևյալն է ասում. «Բայց լեիկյան պատմությունն արխիվ չէ, այլ ղեկավարություն դործնականում, վոր մեզ բանալի յե տալիս հասկանալու և լուծելու համար մեր յերկրի սոցիալիստական շինարարության և համաշխարհային պրոլետարիատի պայքարի ակտուալ խնդիրները» :

Շատ ընկերներ ասում են, վոր ժամանակ չկա այդ գործով զբաղվելու : Յես ուզում եմ հիշեցնել կոմսոմոլի պատմությունից մի բան : 1929 թ. կոմսոմոլի Կենտրոնի որդան «Կոմսոմոլական պրավդա» թերթին ընկ. Ստալինին մի շարք հարցեր եր տվել, նրանց թվում և ժամանակի մասին : Ընկ. Ստալինը պատասխանելով թերթին, հետևյալն է ասում.—«Սակայն հնարավոր է արդյոք քեռրիայի և պրակտիկայի այդպիսի շաղկապում կամ յերիտական ակտիվի ծանրաբեռնվածությամբ ներկա պայմաններում : Այո, հնարավոր է : Ինչ խոսք, վոր սա դժվար գործ է : Բայց այդ միանգամայն հնարավոր բան է, յեթե դա այդչափ անկրաժեշտ է, յեթե առանց այդ պայմանի անկարելի յե ստեղծել իսկական լենինյան ակտիվ կամ յերիտական մեջ : Մենք չենք կարող նմանվել քուլամորթ մարդկանց, վարժակ վախճում են դժվարություններից և փնտռում են հեշտ աշխատանք :

«Դժվարությունները հեկց նրա համար գոյություն ունեն, վորպեսզի պայքարենք նրանց դեմ և հաղթանքներից նրանց» :

Թերթը հարց եր տալիս.—Հնարավոր է արդյոք թեռրիայի և պրակտիկայի այդպիսի շաղկապում կոմսոմոլի ակտիվի ծանրաբեռնվածության պայմաններում. ընկ. Ստալինը պատասխանում է.—այո, հնարավոր է : Ինչ խոսք, վոր դժվար գործ է, բայց հնարավոր է : Մենք չենք կարող նմանվել թուլամորթ մարդկանց, վորոնք փախչում են դժվարություններից և փնտռում են հեշտ աշխատանք : Դժվարությունները, ասում է ընկ. Ստալինը, հենց դրա համար ել գոյություն ունեն, վորպեսզի պայքարենք և հաղթանքները դրանց : Ուրեմն ժամանակ պետք է գտնվի : Մենք պետք է այդ խնդիրը սրենք մանավանդ հիմա, դասակարգային պայքարի նման սրված պայմաններում :

Խոսելով ընկ. Ստալինի այդ ասածների մասին, դժվարությունները հաղթահարելու վերաբերյալ, մենք կարող ենք այդ խոսքերն ուղևորել ունենալ և այլ դժվարությունների մասին խոսելիս :

11. ԻՍՅՆՇԵՎԻԿՈՐԵՆ ՁԵՆՆԱՐԿԵԼ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՆ

Յես նկատի ունեմ մատակարարման ժամանակավոր դժվարությունները :

ները : Կան մարդիկ, վորոնք մոռանում են, ինչպես ասում է ընկ. Ստալինը, վոր մեր դժվարությունները հետևին թաղմանը և դասակարգային թշնամին, կուլակը, մեզ մոտ, Հայաստանում դաշակները : Կան մարդիկ, վորոնք մոռանում են, վոր մենք սոցիալիզմը կառուցում ենք մեր սեփական, պրոլետարական հաշվին, վոր վոչ վոք մեզ այդ գործում չի ոգնում, այլ ընդհակառակը, խանգարում են, և յեթե սոցիալիզմը մեր սեփական պրոլետարական հաշվին ենք կառուցում, ապա պարզ է, վոր դժվարություններ կլինեն :

Սարգիս կան, վորոնք «լավություն» են անում մեզ, չեն ուզում «տեսնել» այդ դժվարությունները, չեն ցանկանում բացատրել, կամ լավագույն դեպքում սկսում են համեմատել նախկինի հետ : Նրանց, նախկին դեռության հետ համեմատողների մասին եր, վոր ընկ. Ստալինը իր ճառում, վոր հայտնի յե 6 ցուցումների անվան տակ, ասում եր. «Զի կարելի ժխտել, վոր վերջին ժամանակներս քիչ քան չի արված բանվորների բնակարանային շինարարության և հայրաքանդակապետության : Սակայն միևնույն ժամ արվածը շատ քիչ է բանվորների արագորեն աճող պահանջներին բավարարելու համար : Զի կարելի հեկվել այն հասկանալի վրա, վոր առաջ բանվորներին ապրանք հայրաքանդակապետ գործն ավելի վատ եր, քան այժմ, վոր այդ հիման վրա կարելի յե բավարարվել գոյության ունեցող դրությունը» :

«Միմիայն փոստ, մինչև ուղևոր ծուծը նեխված մարդիկ կարող են միմիայն անցյալը մատնանշելով : Պետք է յեկակետ ունենալ վոչ քե անցյալը, այլ քանվորների ներկայիս հարանուն պահանջները : Պետք է հասկանալ, վոր մեզ մոտ արմատապես փոխվել են բանվորի գոյություն պայմանները : Այժմ բանվորն այն չէ, ինչ առաջինում, ներկայումս բանվորը, մեր խորհրդային բանվորն ուզում է ապրել, բավարարել իր բոլոր նյութական ու կուլտուրական պահանջները, պարենավորման իմաստով, բնակարանային իմաստով, կուլտուրական և այլ տեսակ բոլոր պահանջների բավարարման իմաստով : Նա իրավունք ունի դրան, և մենք պարտավոր ենք ապահովել նրա համար այդ պայմանները» : (Ընդգծումները մերն են) :

Բացի դրանից յես ուզում եմ կարգալ ձեզ ընկ. Կազանովիչի ճառից մի կտոր, վոր նա արտասանել է պրոֆմիլությունների 9-րդ համագումարում և վորը տպված է «Խորհրդային Հայաստան»-ում, 118 և 119 համարներում : Ահա թե ինչ է ասել ընկ. Կազանովիչը.

«Կզանվեն նվազողներ, վորոնք կասեն՝ «յեթե մենք այդպիսի դժվարությամբ միլիարդներ ենք հասկացնում գործարաններին, վորոնք արտադրանք պիտի տան միմիայն 2-3 տարուց հետո, ավելի լավ չե՞ արդյոք անել հեշտը» :

«Ինչի՞ համար եք իսկույն Մագնիտոստրոյ, վիքիսարի, աշ-

խաբհիս խոշորագույն «Շարիկապաղչիպնիկ» գործարանը Մասկվայում, կուզմեցկի մետաղաձուլական գործարանը, Դմեպրոստոյը կառուցում: Ավելի հեշտ կլինեի կառուցել տեֆտիլ և կոշկեղենի գործարաններ. վառմաման կունենայինք, կտրեղեն և այլն կունենայինք: Ինչի՞ յեր պետք կիրառել կռկտիվացումը, բոլ առաջվա նման անհառական տնտեսությամբ վարելիս գյուղացիները: Յեթե ազատությամբ տրվեի կուլակին, նա մթերք կբերեր շուկա, այդ մթերքը կգնեինք, ավելի «հեշտ» կապրեյինք»:

«Այդպես են դատում մանր-բուրժուական կապիտուլյանտները, յերբեմն կուսակցական տոմս ունեցող այդ իսկական քաղքենիները, վորովհետև կուստոմսը չի փրկի քաղքենիությունից, մանր-բուրժուական տրամադրություններից: Կան անկուսակցականներ, վորոնք յերբեմն ավելի կայուն, ավելի կոփված են, քան կուսակցականներին վրմանք»:

«Սակայն այդ իմաստալիները խորապես սխալվում են: Այդ մարդիկ իրենց քթից այն կողմը չեն տեսնում: Նրանք չեն հասկանում, վոր յեթե մենք գնայինք աջ ուղիորիստների և տրոցկիստների առաջարկած ուղիով, ապա կկորցնեյինք այն ամենը, ինչ վոր նվաճել ենք Հոկտեմբերյան հեղափոխություն ժամանակ: Գուժեղանար կուլակը, կուժեղանար կապիտալիստը, իսկ դրա արդյունքը կլինեի կապիտալիզմի վերականգնումը, կապիտալիստական ստրկություն վերականգնումը, իր աղքատությունը, գործազրկությունը և իրավազրկությունը...»:

... «Ձախ» ուղիորիստները յենթարկվեցին կապիտուլյանտական տրամադրություններին: Տրոցկիստներն իրենց «ձախ» ֆրազներով մեզ քաշում եյին դեպի կապիտալիզմի վերականգնումը:

Իսկ մենք, ընկերներ, այլ ուղիով գնացինք: Մենք գնացինք լենինյան ուղիով, սկզբում բերքաւ ավելի դժվարին, բայց դրա փոխարեն ավելի վստահելի, հաղթանակ բերող միակ ուղիով: Այ բե լավ հրամանատարներ, մարտիկներ, կարմիր-բանակայիններ կլինեյին, յեթե նվաճելով դիրքերը, նվաճելով մի սար, նրանք քմեյին, քուլանային, պառկեյին ճեղու, վերցնեյին իրենց պահակները, բայց թողնեյին ձիերին արածելու և ասեյին. «Դե, տղերք, հանգստացեք: Ավելի վեր, ավելի առաջ գնալով փշալարերի միջոցով, պետք է բարձրանալ հաջորդ սարը, դրան վե՛լ նոր բլուրներ, իսկ մենք հոգնած ենք, ավելի լավ է, մենք առաջմա այստեղ ճենք մի քիչ»:

«Ուրեմն մեզ, խորհրդային ամբողջ պրոլետարիատին ասեմք՝ չվերցնել պահակներին, դեմոքրիկացիայի չեմքարկվել, այլ

պահպանել դիրքերը, կանգ չառնել մի դիրքում, այլ առաջ գնալ (բռն ծափեր):

«Մենք աղնվորեն, անկեղծորեն ասում ենք բանվորներին. «Դու պրոլետար ևս, սոցիալիզմի մարտիկն ես դու, վոր անցել ես պայքարի արյունալի ուղին, այն ուղին, վորը պրոլետարիատի ձեռքով իշխանություն նվաճումից 1917 թվականի հոկտեմբերին, այդ խորհրդային իշխանություն պաշտպանությունից, քաղաքացիական պատերազմի բովով, ՆեՊ-ի միջոցով, տանում է դեպի սոցիալիզմը, — դու դիտես, վոր այժմ մենք հասել ենք վերակառուցման շրջանին»:

«Մենք անցել ենք կուլակի դեմ հացի համար մղվող պայքարի ուղին, այսօր մենք դեռ դժվարություններ ենք կրում, սակայն մենք, բայլչեիկներս, մենք, Խորհրդային Մեծ Միություն բանվորներս չենք, վոր աջ և «ձախ» կապիտուլյանտների նման նահանջելու յենք ժամանակավոր վաղանցուկ դժվարություններից: Թող նրանք, ովքեր վախենում են այդ դժվարություններից, ովքեր պատրաստ են եթան դնով վաճառել մեր ձեռք բերած մեծ հաղթանակները, թող նրանք յերազեն նվաճված դիրքերը հանձնելու միջոցների մասին: Իսկ մեր բաղամալիին բանվոր դասակարգը, վորին ղեկավարում է նրա կուսակցությունը, վորին ղեկավարում են վոչ թե տրեյդունիստական, այլ առաջավոր, բայլչեիկյան արհմիությունները, դեն կչարտի թերահավատության թույնը և առույգ քայլերով, վստահորեն առաջ կգնա դժվարությունների միջոցով դեպի նորանոր հաղթանակներ»:

Ինչո՞ւ յես յերկար ցիտատ բերեցի ընկ. Կադանովիչի ձառից: Վորովհետև այն, ինչի մասին խոսում է ընկ. Կադանովիչը, այդ խոսակցությունները լավում են և մեզ մոտ: Անցյալ ուր կոմյերիտական աշխատողներից մեկը «հանաքով» վիճում եր այն մասին, վոր մեզ մոտ ոեալ աշխատավարձ ի՞նչ է: Յես ասի նրան ընկ. Կադանովիչի խոսքերը, վոր նա, այդ ընկերը, իր քթից դենը չի տեսնում: Ինչ խոսք, վոր մեր բանվորը հիմա ավելի լավ է ապրում, քան առաջ: Հենց վերցնենք այն փաստը, վոր բանվորի կուլտուրական և կենցաղային պահանջները հակադական չափով աճել են: Վերցնենք այն փաստը, վոր մեզ մոտ գործազրկություն բուրրովին չկա: Իսկ դա քիչ բան է: Ձեզնից չատերը չդիտեն, թե ինչ է նշանակում գործազուրկ լինելը:

Ձեզնից չատերը չդիտեն, թե ինչ պայմաններումն է ապրում յեմլրուպական և կամ ամերիկյան բանվորը:

Յես, ընկերներ, վերջերս մեր ժուրնալներին մեկում կարդացի հետևյալ հայտարարությունը, վորը տվել եր Ամերիկայի մի գործազուրկ

թերթում: Գործադուրկը հայտարարել էր. «Ցանկանում եմ վաճառել ինձ ինչպես ստրուկ, մի կտոր հացի համար, աշխատանքի համար ընդունակութուն ունեմ, վորովհետև նոր ե, ինչ գործադրկության մեջ եմ ընկել»:

Իհաստանում մի գյուղացի ծախում է իր 19 տարեկան վորդուն 300 դրոսի գումարով: Ուրիշ տեղ՝ գերմանական բանվորներից մեկը հայտարարութուն է տալիս, վոր «ինչպես լինի, համաձայն եմ գործի անցնել. համաձայն եմ նույնիսկ ամուսնանալ հրեշի հետ, միայն թե գործ տաք»:

Յեթե, ընկերներ, յեվրոպական ցանկորը քնելիս չի իմանում, թե առափոռն ինչ պետք է անի, յեթե նա ստանում է չնչին նպաստ, վորը համասար է ամսական 7 ուրբու 7 չնչի համար, ապա մեզ մոտ շատ կոմյերիտականներ չգիտեն, թե ինչ է գործադրկութունը:

Կան մարդիկ, վորոնք փոխանակ լծվելու դժվարությունները վերացնելու գործին, կազմակերպելու բանվորական մատակարարման յրացուցիչ ռեսուրսների գործը, ոգնելու խորհրդային առևտրի ծավալման գործին, զբաղվում են նրանով, վոր նվում են, լաց լինում, հճատ կանալով, վոր մեզ մոտ կան դժվարությունների հաղթահարման բոլոր նախապայմանները, վոր բացի այդ, կարելի չէ հենց հիմա զգալի չափով յավազնել բանվորության մատակարարումը:

Այս ուղղությամբ մենք Յերևանում վորոշ գործ սկսել ենք. պետք է ունենանք մոտ 700 հեկտար բանջարանոց, վորոշ քանակությամբ խոզ, կով, ճագար, հավ ճաշարաններին կից և այլն: Հարկավոր է, վոր կոմսոմոլը գործնական ոգնութուն հասնի մեր կազմակերպություններին, զբաղվի հենց բանջարանոցի, խոզի, ճագարի, հավի գործով, և զբաղվի վոչ բանաձևային դժով: Այս գործն առաջին հերթին ընկնում է Հայկոսպի, Ժողանդի և այլ կազմակերպություններում աշխատող կոմյերիտականների վրա: Դուր պետք է տեսնեք, թե ինչ դրության մեջ են մերձքաղաքային տնտեսության խոզերը: Հիշեցնեմ՝ կուսակցության 16-րդ համագումարում ընկ. Ստալինն իր ղեկուցման մեջ հատուկ շեշտեց խողարուծության նշանակութունը. իսկ մենք ի՞նչպիսի վերաբերմունք ունեն դեպի խոզը. շատ վատ, այնինչ, յեթե կարելի չէ ասել, խողը պետք է լինի մեզ մոտ ամենապատվավոր կենդանին: Խողին մենք պետք է հանենք «խողային» դրությունից և դնենք իրեն վաճել պայմաններում: Այս ևս պետք է կիրառի կոմսոմոլը:

Դրա հետ կապված է ճագարարուծության խնդիրը: Կա կուսակցության Կենտկոմի վորոշումը, վորը լույս է տեսել «Խորհրդային Հայաստանում». կա ԼԿՅԵՄ Կենտկոմի և ԼԿՅԵՄ Յերբաղկոմի վորոշումը, վորտեղ ասված է, վոր ամեն մի կոմսոմոլիստ Համամիութենական կոմյերիտական կոնֆերանսին պետք է գիմավորի 2 ճագարով: Ճագարը պետք է մսի յրացուցիչ աղբյուր դառնա մեզ համար: Չի՞ կարելի ար-

դյոք մի անգամ հրավիրել կոմսոմոլի ակտիվի նիստ և մուտքի տոմս սահմանել մի-մի ճագար. ով ճագար բերեց—նա ակտիվի նիստին կմասնակցի, ով չբերեց, չի մասնակցի: Վերջապես՝ հավը, ձկնորսությամբ պարագելը, գործարաններում մնացորդներից լայն գործածության առարկաներ պատրաստելը և այլն: Ահադին հնարավորություններ կան:

Ուրեմն, ընկերներ, խնդիրը կայանում է նրանում, վոր դժվարություններից մենք չպետք է վախենանք, լաց չլինենք և չտխմենք, այլ կազմակերպենք գործը և առաջ տանենք, բայիշխիլորեն լծվենք գործին, լավ իմանալով, վոր այս ասպարիզում մենք փաղափակա՞նք քննություն պետք է տանք:

Պիոներական կազմակերպության մասին չեմ խոսում: Այդ մասին կա Համակուսի Կենտկոմի հատուկ վորոշումը: Մենք պետք է գումարենք հատուկ Ժողով, այդ հարցով զբաղվենք: Նորենտր քաղկոմի առաջին աշխատանքը պետք է լինի հենց այդ հարցը:

Յեղրափակենք, հավասարած լինելով, վոր կոմսոմոլը կկատարի այն բոլոր խնդիրները, վոր առաջադրում է կուսակցության Կոմիտեն, Կկատարի կուսակցության ղեկավարությամբ, կուսակցության բջիջների ղեկավարությամբ և ոգնությամբ, անխնա պայքար մղելով կուսակցության դժից նկատվող բոլոր թեքումների դեմ: Պայքար մղելով աջ թեքման, վորպես ներկա ետապի գլխավոր վտանգի, — «ձախ» խոտորումների, հաշվողականության, նեխված լիբերալիզմի դեմ:

Կկատարենք այս բոլորը, վորովհետև այս բոլորը նախապայմանն է դասակարգային թշնամու դեմ ուղղված կրակն ավելի անվտայ դարձնելու, մեր առաջխաղացումն ավելի լայնածավալ դարձնելու գործում:

Դասակարգային թշնամին մեզ մոտ և նրա զաղափարախոս ֆալսիտական Դաշնակցությունը, դաժուր վոխում են իրենց պայքարի ձևերը: Մեր լողունը պետք է լինի՝ այնպես ծավալել դաստիարակչական աշխատանքը, մանավանդ ինտերնացիոնալ դաստիարակչական գործը, վորպեսպի վոչ մի յերիտասարդ աշխատավոր մեր ազգեցությունից դուրս չմնա:

Յերևանի կոմսոմոլը պետք է ցույց տա դասակարգային թշնամու դեմ պայքարելու ավելի ճկուն և բարձր ձևեր:

Մենք մտել ենք սոցիալիզմի շրջանը, մենք կառուցում ենք անդադար դ սոցիալիստական հասարակարգ, մենք աճում, հզորանում և զորեղանում ենք: Մենք պայքարի յենք դուրս յեկել կոմունիզմի հաղթանակի համար:

Կրկնապատկենք մեր յեռանդը, մեր ենտույիտվածը, մեր աշխատանքի տեմպը և վորակը:

Ավելի բարձր լենինիզմի դրոշմ—մեր հաղթանակի, հարձակման, առաջխաղացման, կոմունիզմի դրոշմ:

Հառաջ դեպի անդադար դ սոցիալիստական հասարակարգը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Յերկրորդ հնգամյակի շեմին	5
2. Սոցիալիզմի հետագա ե՛լ ավելի հուժկու անման համար	5
3. Լինել դասակարգային պայքարի առաջավոր դիրքերում	8
4. Լրիվ կատարենք բայլշևիկյան շտաբի դիրեկտիվը	10
5. Կոմսոմոլը սոցիալիստական շինարարության վճռական ուժերից մեկն է	11
6. Մեր կյանքի ամբողջ խնդիրը կոմունիստական հասարակարգ ստեղծելն է	13
7. Հանաչել ամեն մի կոմյերիտականի	15
8. Ավելի քիչ փուռն փրագներ, ավելի շատ հասարակ և առօրյա գործ	18
9. Դեկրետացրությունից հեռու մնալ . լինել լենինեց-աշխատող	22
10. Զինվել մարքսիզմի-լենինիզմի թեորիայով	25
11. Բայլշևիկորեն ձեռնարկել դժվարությունների վերացման գործին	26

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.



П. ПЕТРОСЯН

ЗАДАЧИ ЭРИВАНСКОЙ ОРГАНИЗАЦИИ ЛКСМА
В ЗАВЕРШАЮЩЕМ ГОДУ ПЯТИЛЕТКИ

Госиздат ССР Армении

Գլխավոր Պ 7643 (բ) • Գառնիկ Պ 2583 Տիրաժ 4000
Հայպոլիգրոֆի տպարան, Երևան

ՀՀ Ազգային գրադարան



NL0195520

